Г. В. СТАРОВОЙТОВА, Этническая группа в современном советском городе. Социологические очерки, Л., издательство «Наука», 1987, 174 с.

Գ. Վ. ՍՏԱՐՈՎՈՅՏՈՎԱ, էթնիկական խումբը ժամանակակից սովետական քաղաքում: *Սոցիոլոգիական ակնարկներ, Լենինգրադ, «Նաուկա» հրատարակչություն, 1987, 174 էջ։*

Սովետական ազգագրության զարգացման արգի փուլի առանձնահատկություններից մեկը սեփական էթնիկական միջավայրից դուրս բնակվող ազգային խմբերում ընթացող գործընթացների ուսումնասիրության ընդլայնումն է։ Դա պայմանավորված է երկրի բնակչության միգրացիոն ակտիվության աճով, որն էլ, իր հերթին, կապված է սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման զանազան գործոնների հետ։ Վերջին երկու տասնամյակների ընթացքում լույս տեսան արժեքավոր մի շարք աշխատություններ, որոնք նվիրված են ինչպես Սովետական Միության, այնպես էլ արտասահմանյան երկրների տարբեր խմբերի էթնիկական գործընթացների ուսումնասիրմանը[1]։

Գ. Ստարովոյտովայի գրախոսվող աշխատությունը տարբեր էթնիկական խմբերի ուսումնասիրման բնագավառում հեղինակի՝ տարիների աշխատանքի արդյունքն է[2]։ Մեթոդական տարբեր միջոցների համադրումը (սոցիոլոգիական հարցում, արխիվային նյութերի վերլուծություն, անմիջական դիտումներ) Գ. Ստարովոյտովային թույլ է տվել վերհանել տարբեր խմբերի էթնիկական գործընթացների հիմնական ուղղությունները ու օրինաչափությունները բազմամիլիոնանոց սովետական քաղաքում։ Հայերի, թաթարների և էստոնացիների ընտրությամբ բացատրվում է հեղինակի ձգտումով՝ բազմազանությամբ ընդգրկել Լենինգրադի տարբեր ազգային խմբերի ներսում էթնիկական գործընթացները։ Իսկապես, այդ տարբեր խմբերը պատկանում են միմյանցից բավականին հեռու գտնվող պատմաազգագրական շրջաններում բնակվող էթնիկական հանրությունների, տարբեր լեզվաընտանիքների ու դավանանքների։ Ըստ Գ. Ստարովոյտովայի, տարբեր էթնիկական խմբերի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության նյութերի համեմատումը նույն ժողովուրդների էթնիկական տարածքում անցկացված համանման հետազոտության նյութերի հետ թույլ կտա «հայտնաբերել առանձին մշակութային տարրերի կայունության աստիճանը էթնիկական միատարր, հոծ միջավայրում մի կողմից և ցրված, այլ էթնիկական միջավայրում՝ մյուս կողմից» (էջ 30)։

Գ. Ստարովոյտովայի աշխատանքը կարելի է համարել լուրջ ներդրում նաև հայագիտության բնագավառում, քանի որ այն Սովետական Միության տարածքում գտնվող տարբեր հայ

---

[1] *Տե՛ս, օրինակ,* М. Э. Коган, Поведенческие индикаторы этнокультурных ориентаций у горожан («Этнические стереотипы поведения», Л., 1985, с. 34—47); О. Б. Наумова, Национально-смешанные семьи у немцев Казахстана [«Советская этнография» *(այսուհետև՝* СЭ), 1987, № 6, с. 91—99]; М. Э. Хайкина, К вопросу о структуре межличностного общения мигрантов в иноэтнической среде (по материалам опроса ленинградских татар) (СЭ, 1980, № 4, с. 98—104); Т. Д. Филимонова, Об этнокультурном развитии немцев СССР (СЭ, 1986, № 4, с. 100—111); С. А. Арутюнов, Японцы в Бразилии [«Расы и народы» *(այսուհետև՝* РиН), М., 1972, вып. № 2, с. 256—265]; И. Ю. Заринов, Поляки в Бразилии (РиН, М., 1981, вып. № 11, с. 165—175); В. А. Скрозникова, Японцы в США (РиН, М., 1976, вып. № 6, с. 232—246).

[2] *Տե՛ս, օրինակ,* Г. В. Старовойтова, О формировании татарской этнодисперсной группы в населении Петербурга-Ленинграда (СЭ, 1980, № 1, с. 34—45); *նույնի՝* Этнические особенности поведения и внешности в восприятии горожан («Этнические стереотипы поведения», Л., 1985, с. 22—34); *նույնի՝* Этнодисперсная группа в современном советском городе (на материалах исследования татар в Ленинграде) («Этносоциальные проблемы города», М., 1986, с. 192—275).

էթնիկական խմբերի սոցիոլոգիական հետազոտությանը նվիրված անդրանիկ ուսումնասիրությունն է[3]։

Աշխատության առաջին մասը նվիրված է հետազոտության ընդհանուր տեսական և կիրառական նշանակությանը, շարադրված է հարցի պատմագրությունը, ներկայացված են աշխատանքային վարկածները։ Երկրորդում հեղինակն անդրադառնում է Պետերբուրգ-Լենինգրադի բնակչության կազմում տարբերակ խմբերի ձևավորմանը։ Նա այստեղ առանձնացրել է էստոնական, թաթարական և հայկական գաղութների ձևավորման հիմնական փուլերը, ներկայացրել վերաբնակիչների սոցիալական կազմը, համառոտակի բնութագրել հայրենակցական տարբեր միությունների գործունեությունը։

XX դ. սկզբին Պետերբուրգի հայ գաղութը ուներ մոտավորապես երկու հազար անդամ։ Այն աչքի էր ընկնում մտավորականության բացառիկ բարձր տեսակարար կշռով։ Հեղինակի հաշվարկների համաձայն, 1869 թ. քաղաքի հայ բնակչության մոտավորապես 80 %-ը մտավորականության ներկայացուցիչներ էին՝ ուսանողներ, ուսուցիչներ, գիտնականներ (էջ 67)։ 1917 թ. հեղափոխության նախօրյակին գաղութում մտավորականության կշիռը փոքր-ինչ իջել էր, դրա փոխարեն կտրուկ բարձրացել էր բուրժուազիայի ներկայացուցիչների քանակը։ XIX դ. վերջի և I համաշխարհային պատերազմի ողբերգական իրադարձությունների հետևանքով Պետերբուրգը դառնում է Արևմտյան Հայաստանում ազատագրական շարժման կազմակերպման և գաղթականներին օգնություն ցույց տվող խոշորագույն կենտրոններից մեկը։ Այս հանգամանքը դրական մեծ նշանակություն ունեցավ նշված ժամանակաշրջանում տարաբնակ խմբի անդամների մեջ էթնիկական ինքնագիտակցության պահպանման գործում։

Ըստ 1979 թ. մարդահամարի նյութերի, Լենինգրադում ապրում էին ավելի քան 8 հազար հայ, որոնց ընդամենը մեկ քառորդն էր ծնվել Լենինգրադում։ Հայկական, ինչպես և թաթարական խմբերի տարիքային կազմը հիմնականում համընկնում է Լենինգրադի բնակչության տարիքային կառուցվածքին։ Էստոնացիների մեջ բացարձակ մեծամասնություն են կազմում 65-ից բարձր տարիքի անձինք (58,0 %)։ Այս հանգամանքը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է սովետական իշխանության տարիներին տարաբնակ խմբերի ձևավորման առանձնահատկություններով. եթե էստոնացիների՝ Լենինգրադ տեղափոխվելու բարձրակետը 1920-ական թվականներն էին, ապա հայերի համար՝ 70—80 թվականները։ Ընդ որում, հայերի մեջ դիտվում է սեփական հանրապետությունից մեկնածների ամենաբարձր ցուցանիշը՝ 37,4 %։ Թաթարների և էստոնացիների մեջ նույն ցուցանիշը համապատասխանաբար հասնում է 17,1 % և 21,1 %։ Եթե հաշվի առնենք, որ 70—80 թթ. դիտվում է հայերի բավականին զգալի արտահոսք Անդրկովկասից[4], ապա մեզ համար խիստ հետաքրքիր է բացասական այդ երևույթի պատճառների վերլուծությունը։ Ցավոք, հետազոտողն այդ հարցին չի անդրադարձել (թերևս հարցի մասնավորության և ընտրության սահմանափակության պատճառով)։

Տարաբնակ խմբերի սոցիալ-մասնագիտական կառուցվածքին անդրադառնալիս Դ. Ստարովոյտովան օգտվել է սովետական էթնոսոցիոլոգիայում ընդունված դասակարգումից՝ հաշվի առնելով նաև հասարակական այն խմբերը, որոնք անմիջական կապ չունեն արտադրության հետ (սովորողներ, թոշակառուներ, տնային տնտեսուհիներ)։ Լենինգրադի տարաբնակ էթնիկական խմբերի սոցիալ-մասնագիտական կառուցվածքի միատիպությունն ուղեկցվում է նրանց ներսում սոցիալ-մասնագիտական խմբերի տեսակարար կշռի տարբերություններով։ Այսպես, եթե Լենինգրադի հայ բնակչության կառուցվածքում գերակշռում են մտավոր աշխատանքով զբաղվողները (52,9 %), ապա թաթարների և էստոնացիների մեջ նույն սոցիալական շերտի տեսակարար կշիռը հասնում է համապատասխանաբար 37,7 % և 24,5 % (էջ 89)։ Բարձր է նաև հայերի կրթական մակարդակը, գաղութի անդամների 45,2 %-ը ունի բարձրագույն կրթություն [նույն ցուցանիշը թաթարների, էստոնացիների և Լենինգրադի ողջ բնակչության համար կազմում է

---

3 Առ այսօր սովետական գիտության մեջ համարյա ուսումնասիրված չեն այնպիսի խոշոր տարաբնակ խմբեր, ինչպիսիք են Թբիլիսիի, Բաքվի, Մոսկվայի և Հյուսիսային Կովկասի հայերը։ Վիճակը համեմատաբար բարվոք է արտասահմանի հայ գաղութներին հատուկ էթնիկական գործընթացների ուսումնասիրման բնագավառում (Տե՛ս օրինակ R. Leonian, Les arménien de France: Sont-ils assimilés, Paris, 1986, 206 p.):

4 Տե՛ս Վ. Շ. Թովմասյան, Ս. Ն. Սիմոնյան, Աշխատուժի վերարտադրության ռեգիոնալ առանձնահատկությունները (Հայկական ՍՍՀ օրինակով), Երևան, 1985, էջ 123—124։

համապատասխանաբար 12,9 %, 13,7 % և 27,5 % (էջ 89)]։ Տարբնակ էթնիկական խմբերի սոցիալ-մասնագիտական կառուցվածքում եղած տարբերությունները բացատրվում են դաղութի և ընդհանրապես տվյալ էթնոսի ավանդույթներով, վերաբնակեցման ժամանակով և առանձնահատկություններով, դաղութի անդամների ադապտացման աստիճանով և այլն։

Աշխատության չորրորդ գլուխը նվիրված է էթնիկական խմբերի ապրելակերպի առանձնահատկություններին։ Հեղինակն առանձնացրել է էթնոլեզվական գործընթացներն ու ազգամիջյան ամուսնությունները, գործունեության ոչ արտադրական ոլորտների փոխհարաբերությունը, կենցաղը։

Լեզուն կարևորագույն էթնոմիավորող և էթնոտարբերակող գործոն է, և տարաբնակ խմբում էթնիկական գործընթացների ուղղությունն ու ինտենսիվությունը զգալի չափով պայմանավորված են էթնիկական լեզվի օգտագործման ոլորտների տարբերակերով (սպեկտր)։ Ինչ վերաբերում է ռուսաց լեզվի տարածմանը, ապա բոլոր երեք խմբերում էլ դրա իմացությունը մոտենում է 100 %-ի, այսինքն, լեզվական ադապտացիան ավարտվել է։ ՍՍՀՄ 1979 թ. մարդահամարի և էթնոսոցիոլոգիական հարցման նյութերը վկայում են տարաբնակ խմբում լեզվական ուծացման լայն տարածման մասին։ էթնիկական լեզուն մայրենի են համարել Լենինգրադի հայերի, թաթարների և էստոնացիների համապատասխանաբար 42,4 %-ը, 66,9 %-ը և 31,7 %-ը (էջ 96)։ Խմբերի ներսում հստակ կապ գոյություն ունի լեզվական գործունեության էթնոսոցիոլոգիական երեք բաղադրամասերի միջև (լեզվական իրազեկություն, վարք և կողմնորոշում), այսինքն՝ ազգային լեզվի անբավարար իմացությունն ուղեկցվում է հաղորդակցության ոլորտում նրա թույլ տարածմամբ, հաջորդ սերնդին լեզուն փոխանցելու նվազ արտահայտված ձգտումով (էստոնացիներ)։ Հակառակ վիճակն է տիրում թաթարների մոտ։ Թաթարների և էստոնացիների միջև հայերը միջանկյալ դիրք են զբաղեցնում. էթնիկական լեզվին լիակատար տիրապետողները (ազատ խոսել, գրել, կարդալ) կազմում են 35,9 %, ընտանիքում հայերեն խոսողները՝ 25,3 %, և նրանք, ովքեր ցանկանում են, որ իրենց երեխաները տիրապետեն հայերենին՝ 69,1 %։ Ցավոք, հեղինակն իր առջև խնդիր չի դրել անդրադառնալ լեզվական փոխակերպման գործում երկլեզվության բաղադրամասերի փոխհարաբերության հարցին, որն առ այսօր սովետական ազգագրության մեջ բաց է մնում։

էթնիկական գործընթացների վրա ազգամիջյան ամուսնությունների գերն այնքան ազդեցիկ է, որ մասնագիտական գրականության մեջ այն «նախճիր» է գնահատվել տարաբնակ խմբի համար[5]։ Լենինգրադում հայերի, թաթարների և էստոնացիների ամուսնությունների համապատասխանաբար 26,8 %-ը, 55,7 %-ը և 76,3 %-ը ազգամիջյան են (էջ 98)։ Ներամուսնության (էնդոգամիայի) խախտումը նման խոշոր չափերով արդեն լուրջ վտանգ է ներկայացնում տարաբնակ խմբերի հետագա բնականոն գործառության համար, քանի որ «էթնոսի ներսում պահպանելով ընտանիքների ազգային միատարրությունը, ներամուսնությունն ապահովում է այդ էթնոսին յուրահատուկ մշակույթի հաջորդայնությունը։ Տվյալ դեպքում ներամուսնությունը հանդես է գալիս որպես այդ էթնոսի մշակութային առանձնացման գործոն»[6]։

Տարաբնակ խմբերի մեջ ընթացող էթնիկական գործընթացների մասին անհնար է ամփոփ պատկերացում կազմել առանց էթնոհոգեբանական հարցերի ուսումնասիրության, քանի որ «ժամանակակից քաղաքային բնակչության մեջ էթնիկական առանձնահատկությունը հետզհետե ավելի է կենտրոնացվում հոգեբանության և հոգևոր մշակույթի ոլորտներում» (էջ 124)։ էթնիկական գիտակցության հարցին անդրադառնալիս Գ. Ստարովոյտովան որպես ցուցիչներ օգտագործել է «ինքնանույնացման, էթնոմիավորող և էթնոտարբերակող հատկանիշների, «բնավորության ազգային գծերի» մասին պատկերացումները և այլն։ Հեղինակի ստացած արդյունքներն ու եզրահանգումները հետաքրքիր են ու ինքնատիպ։ Այսպես. հայերի և թաթարների համար անհատական էթնիկական ինքնագիտակցության գործում գլխավորը ժառանգական գործոնն է (հոր ազգությունը), մինչդեռ էստոնացիների համար կարևորը ներընտանեկան հաղորդակցության լեզուն է։ Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հայերի և թաթարների մեջ հիմնականում տղամարդիկ են ընգրկված արտամուսնության (էկզոգամիա) մեջ, ապա կարելի է ենթադրել, որ նշված երկու խմբերն ավելի ուշ կտարրալուծվեն քաղաքի բնակչության մեջ։ Ուշադրության արժանի է նաև հեղինակի առանձնացրած և երեք խմբերին էլ վերաբերող օրինաչափությունը. անհատի սոցիալ-մասնագիտական կարգավիճակի աճի հետ նվազում է ակնհայտ էթնիկական

---

[5] R. Leonian, նշվ. աշխ., էջ 117։

[6] Ю. В. Бромлей, Очерки теории этноса, М., 1983, с. 204.

երանգ կրող հատկանիշների (լեզու, ազգային ծեսեր և այլն)՝ որպես էթնոմիավորող և էթնոտարբերակող գործոնների նշանակությունը։ Բարձր կարգավիճակ ունեցող անձանց համար զգալի է էթնիկական նմանության և տարբերության ոչ ակնհայտ, բայց խիստ էական հատկանիշների (բնավորության գիծ, վարքի առանձնահատկություններ) դերը։ Աշխատության այս մասն առավել կշահեր, եթե հեղինակն առանձին անդրադառնար էթնիկական ինքնագիտակցության փոխակերպման մեխանիզմին։ Մասնավորապես՝ թե հոգեբանական և մշակութային ինչ գործոններ են ազդում տարաբնակ էթնիկական խմբի այն անդամների վրա, որոնց մեջ էթնիկական ինքնագիտակցությունը փոխարինվում է վարչատարածքային ինքնագիտակցությամբ (մոսկվացի, բաքվեցի և այլն)։

Ամփոփելով ասենք, որ ի հայտ է եկել գիտական լուրջ աշխատանք, որն իր տրժանի տեղը կունենա սովետական ազգագրության և հայագիտության մեջ։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱԼՍՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու։